

**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Պայմանագիրը դադարում է գործել հետևյալ դեպքերում.
 - 1.1 Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում,
 - 1.2 այն դեպքում, երբ Ապահովագրողը Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով Ապահովագրավճարի վճարումը չի կատարել:
 - 1.3 դատարանի կողմից Պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու դեպքում,
 - 1.4 ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի սննկացման դեպքում,
 - 1.5 Ապահովագրողի (Շահառուի) կողմից գույքի օտարման դեպքում,
 - 1.6 Ապահովագրողի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ,
 - 1.7 Ապահովագրողի կողմից Ապահովագրողին կեղծ տեղեկություններ հայտնելու դեպքում
 - 1.8 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

2. Եթե Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է Ապահովագրական պատահարի ի հայտ գալու հնարավորության վերանալու պատճառով և Ապահովագրական ռիսկի գոյությունը դադարում է Ապահովագրական պատահարից զատ այլ հանգամանքներից ելնելով (օրինակ ապահովագրված գույքի ոչնչացումը ոչ ապահովագրական պատահարի հետևանքով), Ապահովագրողը վերադարձնում է Ապահովագրողին Պայմանագրի գործողության ժամկետի չլրացած օրերի համար համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը՝ նվազեցված Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերով (Ապահովագրավճարի 42.05%), ինչպես նաև վճարված և վճարման ենթակա հատուցումների չափով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մի մասը հաշվարկվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$ՎԱ = \frac{(U - 42.05\% * U) * n}{N} - Հ,$$

- U՝ Պայմանագրով վճարված Ապահովագրավճարը,
 42.05%*U՝ Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերը,
 n՝ Պայմանագրի գործողության ավարտին մնացած ամբողջական ամիսները,
 Հ՝ վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,
 N՝ ամբողջական ամիսների քանակը, որոնց ժամկետով կնքվել է Պայմանագիրը,
 ՎԱ՝ վերադարձման ենթակա Ապահովագրավճարը:

3. Սույն Պայմանների 2. կետում նշված հանգամանքներից տարբեր այլ հանգամանքներում Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրավճարը չի վերադարձվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: